ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/06

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, քննելով «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից 13.01.2020թ. ներկայացված (14.01.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/06 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ն 13.01.2020թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 2019թ. դեկտեմբերի 09-ի N2 որոշմամբ հրապարակված հրավերին 1, 2, 8, 9, 10, 11, 12 չափաբաժիններով մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ն:

23.12.2019թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ բանակցությունների արդյունքում որոշ մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները հայտով ներկայացրած ինքնարժեքից ցածր են, ուստի հանձնաժողովը որոշել է մերժել հայտերը և 5-րդ կետի համաձայն՝ 1, 2, 8, 9, 10, 11, 12 չափաբաժիններով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչել «Ֆարմեգուս» ՍՊԸ-ին:

Ընկերությունը գտնում է, որ Հանձնաժողովի 23.12.2019թ. ժամը 12:00-ին, Գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետով գնման առարկայի 1, 2, 8, 9, 10, 12 չափաբաժինների մասով «ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ի հայտի մերժման որոշումը և Հանձնաժողովի 30.12.2019թ.-ին հրապարակված թիվ 4 արձանագրության 5-րդ կետով 1, 2, 8, 9, 10, 12 չափաբաժիններով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից «Ֆարմեգուս» ՍՊԸ-ին ճանաչելու, պայմանագիր կնքելու որոշումներն անհիմն են և ենթակա են փոփոխման հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի՝ նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Օրենքի 38-րդ հոդվածի համաձայն՝

Գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

1) երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող

բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ.

2) սույն օրենքով նախատեսված այլ դեպքերի:

Տվյալ դեպքում օրենսդիրը բանակցային փուլում սահմանափակում չի դրել և պարտադիր պահանջ սահմանված չէ բանակցային փուլում գնային առաջարկի ինքնարժեքից ցածր գին ներկայացնելու համար, այդ փուլում գնային առաջարկի նվազեցումը չի կարող դիտարկվել ինքնարժեքից ցածր գին:

Հիմք ընդունելով վերոգրյալ փաստական և իրավական հիմնավորումները և ղեկավարվելով Օրենքի 50-րդ հոդվածով Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների բավարարման համար «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով գնման ընթացակարգով բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման 23.12.2019թ. ժամը 12:00-ին, տեղի ունեցած Գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ և 5-րդ կետերով 1, 2, 8, 9, 10, 12 չափաբաժիններով «ԷսՋեթ Ֆարմա» ՍՊԸ-ի հայտը մերժելու «Ֆարմեգուս» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու, պայմանագիր կնքելու առաջարկի որոշումները փոփոխել և նման առարկայի 1, 2, 8, 9, 10, 12 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԷսՋեթ Ֆարմա» ՍՊԸ-ին:

«ԷսՋեթ Ֆարմա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 20.01.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>2. «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 20.01.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/06 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/06 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցներին հայտ են ներկայացրել «ԷսՋեթ Ֆարմա» և «Ֆարմեգուս» ՍՊ ընկերությունները:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.12.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 12-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Ֆարմեգուս» ՍՊԸ-ն:

3. Նույն արձանագրության համաձայն՝ գների նվազեցման շուրջ հրավիրված բանակցությունների արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել որոշ մասնակիցների հայտերը, քանի որ վերջիններիս կողմից ներկայացված գները հայտով ներկայացված գնային առաջարկի ինքնարժեքից ցածր են:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ԷսՋեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից 13.01.2020թ. ներկայացված բողոքը, «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ

վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված

բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները:

«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցներին հայտ են ներկայացրել «ԷսՋեթ Ֆարմա» և «Ֆարմեգուս» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն, քանի որ Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, ուստի կարգի համաձայն, նիստը կասեցվել է գների նվազեցման շուրջ բանակցությունների վարման համար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.12.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 12-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Ֆարմեգուս» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության համաձայն՝ գների նվազեցման շուրջ հրավիրված բանակցությունների արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել որոշ մասնակիցների հայտերը, քանի որ վերջիններիս կողմից ներկայացված գները հայտով ներկայացված գնային առաջարկի ինքնարժեքից ցածր են:

Այսպիսով՝ «ԷսՋեթ Ֆարմա» ՍՊԸ-ն հայտի թիվ 2 հավելվածով Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ չափաբաժինների մասով ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը.

Չափա-բաժինների համարները	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
1	71 400	13 600	0	85 000
2	71 400	13 600	0	85 000
8	126 000	24 000	0	150 000
9	210 000	40 000	0	250 000
10	294 000	56 000	0	350 000
12	361 200	68 800	0	430 000

ՀՀ դրամ

Գների նվազեցման շուրջ 23.12.2019թ. ժամը 12:00-13:00-ն վարված բանակցությունների արդյունքում Ընկերության կողմից ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը:

Չափա-բաժինների համարները	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	
1	64 300
2	61 300
8	125 000
9	209 500
10	293 500
12	388 600

ՀՀ դրամ

«Ֆարմեգուս» ՍՊԸ-ն հայտի թիվ 2 հավելվածով Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ չափաբաժինների մասով ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը.

Չափա-բաժինների համարները	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
1	58 000	6 400	-	64 400
2	55 000	6 400	-	61 400
8	120 000	29 000	-	149 000

9	180 000	54 000	-	234 000
10	280 000	59 000	-	339 000
12	350 000	79 000	-	429 000

Գների նվազեցման շուրջ 23.12.2019թ. ժամը 12:00-13:00-ն վարված բանակցությունների արդյունքում մասնակցի կողմից ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը:

Չափա-բաժինների համարները	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
8	120 000	5 900	-	125 900
9	180 000	29 900	-	209 900
10	280 000	13 900	-	293 900
12	350 000	39 000	-	389 000

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և **<u>չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից:</u>** Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

2) այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով

սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 5-րդ կետի 5.1 ենթակետով սահմանվել է, որ առաջարկվող գինը ապրանքի արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և **չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից:** Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Տվյալ դեպքում, ուսումնասիրելով «ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից ի սկբանե հայտով ներկայացված գնային առաջարկը և այն համեմատելով Ընկերության կողմից գների նվազեցման շուրջ բանակցությունների արդյունքում ներկայացված ընդհանուր գնի հետ (բացառությամբ 12-րդ չափաբաժնի), արձանագրում եմ, որ Ընկերության կողմից բանակցությունների արդյունքում ներկայացվել են ինքնարժեքից ցածր գներ, որի հետևանքով խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի պահանջներին, քանի որ նշված նորմի վերլուծությունը ցույց է տալիս, որ առաջարկվող գինը չի կարող պակաս լինել նույն կետով սահմանված ծախսերի ինքնարժեքից, որը և ի սկզբանե ներկայացվել է մասնակցի կողմից հայտով: Հետևաբար միաժամանակյա բանակցությունների արդյունքում մասնակցի կողմից չի կարող նվազեցվել գնային առաջարկի ինքնարժեքի բաղադրիչը, քանի որ դա կարող է հանգեցնել նաև գնումների գործընթացի շրջանակներում ոչ խտրական հիմունքներով կազմակերպման, մրցակցության խրախուսման, գնումների գործընթացի մասնակցելու իրավահավասարության սկզբունքների խախտման:

Գտնում եմ, որ «ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը սույն մասով անհիմն է և ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է 12-րդ չափաբաժնին, ապա սույն մասով արձանագրում եմ, որ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի ինքնարժեքը կազմել է 361 200 ՀՀ դրամ, շահույթը՝ 68 800 ՀՀ դրամ և ընդհանուր գինը՝ 430 000 ՀՀ դրամ: Ընկերությունը սույն չափաբաժնի մասով գների նվազեցման շուրջ վարած բանակցությունների արդյունքում ներկայացրել է առաջարկվող ընդհանուր գին և նշել է 388 600 ՀՀ դրամ: Այս տեսանկյունից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ

Պատվիրատուի կողմից տրամադրված «ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ի բանակցության գնային առաջարկում նշվել է միայն առաջարկվող ընդհանուր գինը (388 600 ՀՀ դրամ) և պարզ չէ թե նվազեցումն իրականացվել է ինքնարժեքի բաղադրիչից, թե շահույթի բաղադրիչից, իսկ «Ֆարմեգուս» ՍՊԸ- ի կողմից նույն չափաբաժնի մասով առաջարկվել է 389 000 ՀՀ դրամ, որը գերազանցում է Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը, հետևաբար Ընթացակարգի 12-րդ չափաբաժնի մասով «Ֆարմեգուս» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին գնահատող հանձնաժողովի որոշումը, գործում առկա նյութերի շրջանակներում, դիտարկվում է որպես ոչ իրավաչափ:

Հիմք ընդունելով վերոգրյալը, գտնում եմ, որ «ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն հիմնավոր է միայն Ընթացակարգի 12-րդ չափաբաժնի մասով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից 13.01.2020թ. ներկայացված բողոքի պահանջը Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ չափաբաժինների մասով մերժել.

բողոքը պահանջը Ընթացակարգի 12-րդ չափաբաժնի մասով բավարարել.

պարտավորեցնել «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 12-րդ չափաբաժնի մասով մերժելու և «Ֆարմեգուս» ՍՊԸ-ին նշված չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**